

## **ԹԻՎ 28 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19-Ա**

**«3» նոյեմբերի 2023թ.**

**ք. Նոր Հաճրն**

### **ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

2023 թվականի հոկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագնի համայնքում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի ընտրություններ:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ 2 տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության արդյունքների արձանագրությունները, ամփոփել է Արզնի համայնքի ղեկավարի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ:»:

Նշված իրավանորմի պահանջների հաշվառմամբ, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը իրականացրել է Արզնի համայնքի թիվ 28/2 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, որից հետո քվեարկության արդյունքները մնացել են անփոփոխ՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի 3-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2023 թվականի հոկտեմբերի 29-ի տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

Թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները և 2023թ. նոյեմբերի 2-ին ընդունել է թիվ 18-Ա որոշումը, ըստ որի արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

**Թիվ 28 ընտրատարածքային ընտրական  
հանձնաժողովի նախագահ՝**

**Վ.ԳԱԼՈՅԱՆ**